ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 107

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 68-րդ և 70-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 18.05.2020 թվականի թիվ 50 և 05.03.2021 թվականի թիվ 029 որոշումները, 16.04.2021 թվականին կայացած աճուրդի թիվ 1-ից թիվ 6 արձանագրությունները, Արենի համայնքի ղեկավարը *որոշում է՝*

1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.03հա (ծածկագիրը՝ 10-008-0112-0127, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը 670 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Խաչիկ Աբրահամի Հակոբյանին:

2. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.42175հա (ծածկագիրը՝ 10-008-0179-0017, գործառնական նշանակությունը՝ այլ) գյուղատնտեսական նշանակության հողամասը 195 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Վարդան Ջալալի Համբարձումյանին:

3. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.62016 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0254-0025, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը 2 131 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Վահրամ Վարազդատի Մաթևոսյանին

4. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.08358 հա գյուղատնտեսականնշանակության (ծածկագիրը՝ 10-006-0305-0019, գործառնականնշանակությունը՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը 180 500 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Վահրամ Վարազդատի Մաթևոսյանին:

5. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.08411 հա գյուղատնտեսականնշանակության (ծածկագիրը՝ 10-006-0305-0018, գործառնական նշանակությունը՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը 180 500 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Վահրամ Վարազդատի Մաթևոսյանին:

6. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.01998 հա (ծածկագիրը՝ 10-012-0011-0026, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը 192 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Կորյուն Ռազմիկի Գալստյանին:

7. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.1092 հա (ծածկագիրը՝ 10-037-0020-0002, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) հողամասը 580 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Արգամ Մոլոտի Մարգարյանին:

8. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.23748 հա (ծածկագիրը՝ 10-037-0002-0053 , գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրականն շանակության հողամասը 1 505 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Նելլի Կարենի Աբրահամյանին (լ/ա. Գարիկ Հարությունի Կյուրեխյան):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 108

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 25 ՓՈՂՈՑ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի 25 փողոց թիվ 15 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-008-0009-0009, հողամասի չափը՝ 0.17181 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասի վրա ինքնակամ կառուցված 27.8 քմ բնակելի տարածքը ճանաչել օրինական:
2. Առաջարկել կառույցն իրականացրած Ավետիք Ռուբենի Գասպարյանին վճարելու 1 ք.մ.՝ 1209 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տարածքի համար՝ ընդամենը 33 610 (երեսուներեք հազար վեց հարյուր տաս) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:
3. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 109

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 04 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 022 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, և Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 34-րդ հոդվածի պահանջներով՝ Արենի համայնքի ղեկավարը **որոշում է՝**

Արենի համայնքի ղեկավարի 04.02. 2021 թվականի «Արենի համայնքի Արենի բնակավայրի նախկին բնակիչ (հանգուցյալ) Սիրան Ղազարյանին պատկանող շինության և հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու մասին» թիվ 022 որոշման մեջ <<շինության>> բառը փոխարինել <<պահեստի>> բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 110

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08.01.2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1-Ա ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է***՝

Արենի համայքնի ղեկավարի 08.01.2018 թվականի <<Արենի համայնքի ղեկավարի 29.02.2016 թվականի թիվ 15 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> թիվ 1 որոշման հավելված 1-ի 14-րդ կետի մեջ ավելացնել նոր ե) ենթակետ.

ե) իրականացնում է գաղտնի փաստաթղթերի մշակման, գաղտնի գործավարության վարման և գաղտնիության ռեժիմի ապահովման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 111

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.24285ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.242852 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0148-0002, գործառնական նշանակությունը՝ վարելահող) ճանաչել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 112

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03.03.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 050 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

Արենի համայքնի ղեկավարի 03.03.2021 թվականի <<Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերը առանձին միավոր գրանցելու մասին>> թիվ 050 որոշման 8-րդ կետի մեջ <<համայնքային սեփականություն>> բառերը փոխարինել <<պետական սեփականություն>> բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 113

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 15 դեկտեմբերի 2017 թվականի «Արենի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց կարգը սահմանելու մասին» թիվ 55-Ն որոշումը, Արենի համայնքի «Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, նորածին երեխա ունեցող ընտանիքներին, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման» հանձնաժողովի 26.04.2021 թ. թիվ 3 նիստի արձանագրությունը Արենի համայնքի ղեկավարը **որոշում է.**

1. Արենի համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 4729՝ այլ նպաստներ բյուջեի հոդվածի գումարներից Արենի համայնքի ներքոնշյալ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝

h/h	Ազգանուն,անուն,հայրանուն	Դրամական օգնության չափը /հազար ՀՀ դրամ/	Բնակավայր
1.	Հարությունյան Ամալյա Արգամի	20	Ագարակաձոր
2	Օհանյան Նահապետ Սիրեկանի	30	Աղավնաձոր
3.	Բաղդասարյան Գեղամ Նորիկի	30	Ելփին

4	Մանուկյան Գարեգին Բարեղամի	20	Ելփին
5	Բաբայան Լյուդվիգ Համբարձումի	30	Ելփին
6.	Ավագյան Հայկանուշ Համբարձումի	15	Ելփին
7	Գրիգորյան Արման Աղասիի	20	Ելփին
8.	Սահակյան Շողիկ	20	Չիվա
9	Գևորգյան Մանվել	20	Չիվա
10.	Մանուկյան Կարինե	20	Չիվա
11.	Հակոբջանյան Մարիամ Արարատի	30	Խաչիկ
12.	Կարապետյան Վարդուհի Սամվելի	30	Խաչիկ
13.	Սուքիասյան Երվանդ Էդիսոնի	30	Խաչիկ
	Ընդամենը	315	

2. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի նորածին երեխա ունեցող Գրիգորյան Հայկուհի Արթուրի, հանգուցյալ Օհանյան Հրանուշ Մկրտիչի ընտանիքներին, համաձայն ավագանու 27.02.2019 թվականի N19-րդ որոշման 19-րդ կետի, տալ միանվագ դրամական օգնություն յուրաքանչյուրին 50 000 ՀՀ դրամ:

3. Արենի համայնքի Արփի բնակավայրի բնակիչներ Վահե Զարգանոի Շահնազարյանին, Անահիտ Արմենակի Թադևոսյանին, Գոհար Արարատի Մովսիսյանին, Շավարշ Արտուշի Գրիգորյանին, Արենի բնակավայրի բնակիչ Արմինե Ռուբենի Աբոյանին, համաձայն ավագանու 17.12.2020 թվականի N136 որոշման 25-րդ կետի դ ենթակետի, մեկ երեխային ազատել ծնողական վճարից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 114

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՆԱՍԱՐ ՌԱՖԻԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.1517ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող Սանասար Ռաֆիկի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող 0.1517 հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-020-0003-0013, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) վերահասցեավորել ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Ելփին 26 փողոց, 6-րդ նրբ. թիվ 5, նախկինում տրված գ. Ելփին 27-րդ փողոց 13 հասցեի փոխարեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 115

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16.04.2021Թ. ԹԻՎ 097 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

ՀՀ Վայոց Ձորի մարզի, Արենի համայնքի ղեկավարի 16.04.2021թ.-ի <<ՀՀ Վայոց ձորի մարզի, Արենի համայնքի, գյուղ Արենի հողմասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին>> թիվ 097 որոշման նախաբանում կատարել հետևյալ լրացումը.

Քննարկվող հողամասի բառերից հետո կարդալ «(քանի որ հողամասի գծային չափերը և ուրվագծային պատկերը ենթարկվել են փոփոխության)»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 116

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.0214 ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ 0.00913 ՀԱ ԵՎ 0.01232 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության (ծակագիրը՝ 10-025-0130-0060, գործառնական նշանակությունը՝ պահեստարանների) հողամասի բաժանման ընթացքում առաջացած 0,00913 հա և 0,01232 հա հողատարածքները ճանաչել որպես առանձին միավոր և տալ հետևյալ հասցեները՝

ա) 0.00913հա արդյունաբերական նշանակության հողամասը հասցեավորել Արենի համայնք, գ. Խաչիկ 12-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 2/1

բ) 0.01232 հա արդյունաբերական նշանակության հողամասը հասցեավորել Արենի համայնք, գ. Խաչիկ 12-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 2/2:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 117

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.05885 ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ 0.01435 ՀԱ, 0.01326 ՀԱ ԵՎ 0.03124 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության (ծակագիրը՝ 10-025-0130-0059, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների) հողամասի բաժանման ընթացքում առաջացած 0.01435 հա, 0.01326 հա և 0.03124հա հողատարածքները ճանաչել որպես առանձին միավոր և տալ հետևյալ հասցեները՝

ա) 0.01435հա արդյունաբերական նշանակության հողամասը հասցեավորել Արենի համայնք, գ. Խաչիկ 12-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 2

բ) 0.01326 հա արդյունաբերական նշանակության հողամասը հասցեավորել Արենի համայնք, գ. Խաչիկ 12-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 2/3

գ) 0.03124 հա արդյունաբերական նշանակության հողամասը հասցեավորել Արենի համայնք, գ. Խաչիկ 12-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 2/4:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 118

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 31-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի 31-րդ փողոց թիվ 4 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-008-0016-0001, հողամասի չափը՝ 0.14740 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Հայկազ Օհանի Մանուկյանին (մահացած), Մեհրանուշ Արամի Մանուկյանին (մահացած), Վանիկ Հայկազի Մանուկյանին, Նվարդ Վանյայի Սարգսյանին և Մերի Վանիկի Մանուկյանին (մահացած) համասեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված 206.45 քմ բնակելի տունը ճանաչել օրինական:
2. Առաջարկել կառույցն իրականացրած Վանիկ Մանուկյանին և մյուսներին վճարելու 1 ք.մ.՝ 1209 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տան համար՝ ընդամենը 249 600 ՀՀ դրամ (երկու հարյուր քառասունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:
3. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 119

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Ադամ-Ալեքսան Կաբլանյան Ալեքսանին սեփականության իրավունքով պատկանող0.37436 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-037-0106-0188, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

2. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Ադամ-Ալեքսան Կաբլանյան Ալեքսանին սեփականության իրավունքով պատկանող 0.18281 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-037-0106-0192, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

3. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Ադամ-Ալեքսան Կաբլանյան Ալեքսանին սեփականության իրավունքով պատկանող 2.93520 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-037-0106-0187, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 120

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՎԱՆԻԿ ՀԱՅԿԱԶԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ՆՎԱՐԴ ՎԱՆՅԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.07068 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն, 26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Ճանաչել Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչներ Վանիկ Հայկազի Մանուկյանի և Նվարդ Վանյայի Սարգսյանի կողմից փաստացի օգտագործվող Արենի համայնքի Արենի բնակավայրի 42-րդ փողոց թիվ 4 հասցեում գտնվող 0.07068հա ընդհանուր մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասի (ծածկագիրը՝ 10-008-0007-0027) սեփականության իրավունքը:

2. Վանիկ Մանուկյանի և նրա ընտանիքի կողմից փաստացի ավել օգտագործվող 0.07068հա բնակավայրերի նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 121

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 1ՓԿՂ. ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԻԿ ՀԱՅԿԱԶԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԵՎ ՆՎԱՐԴ ՎԱՆՅԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով և հիմք ընդունելով Վանիկ Հայկազի Մանուկյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1.Ճանաչել Վանիկ Հայկազի Մանուկյանին (ծնվ. 1967թ.) և Նվարդ Վանյայի Սարգսյանին (ծնվ. 1968թ.) սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրի 4-րդ փողոց 1փկղ., թիվ 1 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ:

2. Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը.

3. Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 122

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության և Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, ստորև ներկայացված հողամասերը օտարելու առաջարկություն ներկայացնել համայնքի ավագանուն.

1. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.50554հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0437-0008, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200 %-ից ոչ պակաս՝ 710 000 ՀՀ դրամ,

2. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.35473 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0430-0009, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200 %-ից ոչ պակաս՝ 205 000 ՀՀ դրամ,

3. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.50435 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0430-0008, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200 %-ից ոչ պակաս՝ 290 000 ՀՀ դրամ,

4. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 2.23578 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0432-0010, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200 %-ից ոչ պակաս՝ 1 270 000 ՀՀ դրամ,

5. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.41187 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0437-0003, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200 %-ից ոչ պակաս՝ 575 000 ՀՀ դրամ,

6. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.35720 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0437-0001, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200 %-ից ոչ պակաս՝ 500 000 ՀՀ դրամ,

7. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.38789 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0437-0002, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200 %-ից ոչ պակաս՝ 540 000 ՀՀ դրամ,:

8. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.35766 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0437-0004, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200 %-ից ոչ պակաս՝ 500 000 ՀՀ դրամ,:

9. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.19347 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0437-0005, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200 %-ից ոչ պակաս՝ 270 000 ՀՀ դրամ,

10. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.46222 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0437-0006, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200 %-ից ոչ պակաս՝ 650 000 ՀՀ դրամ,

11. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.25396 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0437-0007, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200 %-ից ոչ պակաս՝ 355 000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 123

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 82.16ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ մասը, ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը, Արենի համայնքի ավագանու 05.03.2021թվականի թիվ 026 որոշումը, Արենի համայնքի ղեկավարը *որոշում է՝*

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 82.16քմ մակերեսով անասնաբուժարանի շենքը ճանաչել օրինական և գրանցել որպես համայնքային սեփականություն,
2. Վերը նշված շինությանը և 0.029 հա բնակավայրերի նշանակության հողամասին տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք, գ. Արենի 4-րդ փողոց թիվ 21:
3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված կառույցն իրականացրած անձն անհայտ է կառույցը տնօրինել Արենի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 43.1 կետը,
4. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**